

**Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի
2015թ. նիստերի արձանագրություններ**

Արձանագրություն 8

2015թ. հոկտեմբերի 17-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ.Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյան/

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց դեկան Հ.Ղաջոյանը: Նա նշեց, որ ուսումնական տարում ֆակուլտետի գործունեության հիմնական նպատակը եղել է կրթության որակի բարելավումը, որն իրագործվում է փուլ առ փուլ: Այնուհետև զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց այն հիմնական աշխատանքները, որոնք նախատեսված են եղել ուստարվա հայեցակարգով: Անդրադարձ կատարվեց բացթողումներին, նախանշվեցին դրանք վերացնելու ուղիները: Հ. Ղաջոյանը ներկայացրեց նաև ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց դեկան Ս.Ամիրխանյանը: Նա ասաց, որ ֆակուլտետի գործունեության նշանաբանն է

եղել «Շրջանավարտը՝ պահանջված մասնագետ» կարգախոսը: Տնտեսագիտական ֆակուլտետը ընթանում է մրցունակ կադրերի պատրաստման ճանապարհով, որի հիմքում ընկած է կրթական ծրագրերի բոլոր բաղադրիչների իրականացումը: Ֆակուլտետի գործունեությունը ներկայացվեց ըստ ընդունված զարգացման հայեցակարգի:

Զեկուցումների շուրջ ելույթ ունեցան գիտխորհրդի անդամները:

Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեց Հ.Թարփոշյանի «Արտադրանքի որակի կառավարման արդյունավետության գնահատումը» և Վ. Առաքելյանի ու Հ.Թարփոշյանի «Մարքեթինգային գործունեության վերլուծության մեթոդներ» գրքերը տպագրության երաշխավորելու հարցը:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթներն ու առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

3.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Հաստատել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

5. Հ.Թարփոշյանի «Արտադրանքի որակի կառավարման արդյունավետության գնահատումը» և Վ. Առաքելյանի ու Հ.Թարփոշյանի «Մարքեթինգային գործունեության վերլուծության մեթոդներ» գրքերը երաշխավորել տպագրության:

Գիտխորհրդի նախագահ՝
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան
Թ.Ասոյան